Հավելված N 1

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-69» ծածկագրով հրավերի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | հասցեն* | ժամկետ |
| 1 | 33651270 | Դեղին տենդի դեմ պատվաստանյութ | | 1-5 դեղաչափ սրվակներով, մատակարարման պահին ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն երկու  երրորդի առկայություն, եվրոպական արտադրության կամ համարժեք, ներկրվող չափաքանակի հետ տեղափոխման ընթացքում ջերմային ռեժիմը գրանցող ջերմային ցուցիչների առկայություն,նշանադրումը՝ կոտրվող, տեղափոխման և պահպանման ընթացքում +2-+8$^{0}$C ջերմաստիճանի ապահովում:<br>Պատվաստանյութի մատակարարումը հետևյալ փաստաթղթերով՝ ավիաբեռնագիր (AWB), հաշիվ ապրանքագիր, փաթեթավորման ցանկ (Packing list),  պատասխանատու կանոնակարգող մարմնի (NRA կամ HPO) կողմից տրամադրված բացթողման հավաստագիր (Lot Release Certificate),  ամփոփիչ արձանագրություն (Summary Protocol), պատշաճ արտադրական գործընթացի հավաստագիր (GMP Certificate): Ներմուծման հավաստագրի տրամադրման համար պատվաստանյութի գրանցված լինելը պարտադիր չէ: | Դեղաչափ | | | 100 | ք.Երևան Գ.Մարգարյան 37 | Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում |

**Մատակարարվելիք ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքի մատակարարումը՝  բեռնափոխադրումը, և բեռնաթափումը համապատասխան պահեստ, իրականացվում է Վաճառողի ուժերով և միջոցներով:**